

Կ'անցընէր. Երուսաղէմի ուխտաւոր մ'էր. աղուհացի
 օրերը, Ս. Գերեզմանին դիմացը ճգնութեամբ ոտքի
 կը կենար. ան պատմած է Վարդան վրդ.ի թէ բոլոր
 ազգերէն նախատուած Հայոց ազգին համար Աստուծ-
 մէ վկայութեան նշան մը ուզած է: Տեղի ունեցած
 դէպքը կը պատմէ հետեւեալ կերպով. «Ս. Գերեզմա-
 նին ծառայող Ֆրանք մը կը տեսնէր զիս. կը կենայի
 Ս. Գերեզմանին քով և ամենեւին չէի խօսեր. ան կը
 սիրէր զիս, կը ստիպէր զիս խօսիլ և բան մը ուտել,
 և անոր մտիկ չըրի: Զատիկի ճրագալուցի օրը խօսե-
 ցայ լուսարարին ազաչելով և երկու կարմիր տուի ա-
 նոր և Ս. Գերեզման մտնելով՝ դրի երեք կանթեղնե-
 րը զոր գնած էի, մէկը ազգին անուամբ, միւսը Ֆը-
 րանկաց և երրորդը յունաց անունով, որովհետեւ ա-
 սոնք էին գլխաւոր ազգերը. եւ ըսի. ո՛վ Տէր Աստ-
 ուած Յիսուս Քրիստոս, կը տարակուսիմ որ երկու
 ազգերու համար Ս. Գերեզմանին լոյսը չի վառիր.
 Կ'ուզեմ գիտնալ թէ այս երեք ազգերէն դաւանու-
 թեամբ և կրօնքով ո՞վ կը վարուի քու կամքիդ հա-
 մաձայն. քու լոյսիդ վառումով ցոյց տուր ինձ կան-
 թեղը այն ազգին՝ որուն կը հաւանիս: Եւ այս ընե-
 լով՝ Ս. Գերեզմանի բանալին և կնքոյ մատանին ա-
 ուի, դուռը փակելէ և կնքելէ վերջ աղօթքի կը կե-
 նայի և յուսով կը սպասէի: Ազդումն եղաւ ինձ եւ
 լոյսը վառեցաւ, ես իսկ լսեցի որոտման հանդարտ
 հնչումը, և մարմնոյս մէջ սոսկում մը եկաւ, փակա-
 պահը մօտ եկաւ և ըսաւ որ բանամ Ս. Գերեզմանի
 դուռը և բացի, ամենէն առաջ ես մտայ, եւ տեսայ
 որ մեր ազգին համար նշանակուած կանթեղը միայն
 վառուած է»:

Այս դէպքը լսած ըլլալով եպիսկոպոսէն՝ իրեն